/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 63-Ա

15 հուլիսի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՀՈՒՆԻՍԻ 10-Ը ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանի կողմից 2022 թվականի հունիսի 24-ի թիվ 02.1/04900-2022 գրությամբ ներկայացված առաջարկությունները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում 2022 թվականի հունիսի 1-ից 10-ը իրականացված իրավական հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Ամբողջությամբ ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում իրականացված իրավական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ կազմված 2022 թվականի հունիսի 15-ի թիվ ԻՀ 01 արձանագրությունում նշված խախտումները:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում իրականացված իրավական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2022 թվականի հունիսի 15-ի թիվ ԻՀ 01 արձանագրությունում նշված խախտումները վերացնելու վերաբերյալ միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյանին՝ սույն որոշմամբ հաստատված միջոցառումների ժամանակացույցին համապատասխան միջոցներ ձեռնարկել համայնքում իրականացված իրավական հսկողության արդյունքում արձանագրված

խախտումներն ամբողջությամբ և սահմանված ժամկետներում վերացնելու, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյանի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ -10 Դեմ՝-0 Ձեռնպահ՝-0

Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Ա. ԱՐՄԵՆՅԱՆ

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Մ.ՂԱԶԱՐՅԱՆ

Գ.ՂԶՐՈՅԱՆ

Ա.ՆԱԶԱՐՅԱՆ

Ա. ՆԻԿՈՅԱՆ

Վ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ՎԱՐՈՍՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

2022 թվականի հուլիսի 15

Քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ԹԻՎ 63-Ա ՈՐՈՇՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՑ 10-Ը ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԶՄՎԱԾ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ԹԻՎ ԻՀ 3 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարման պատասխանատուն	կատարված և կատարվելիք աշխատանքների մասին
1	2	3	
1. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել ավագանու անդամի (անդամների) կամ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայությամբ մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը:	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան	
2.«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն համայնքի ավագանու կողմից իրականացնել համայնքի բյուջեի կատարման և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկում:	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան	
3. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համայնքի ավագանու կողմից ընդունել որոշում՝ համայնքի ավագանու անդամի (անդամների) կամ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ:	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան	Հարցը կքննարկվի առաջիկա ավագանու նիստում
4. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքների բյուջեների կատարման նկատմամբ վերահսկողության հիմնական խնդիրները իրականացնել իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով:	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան	
5. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի ա) կետի համաձայն բյուջետային մուտքերի կանխատեսումների և բյուջետային ելքերի նախահաշիվները կազմելու հիմնավորվածության ստուգումը իրականացնել իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով:	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան	
6. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի բ) կետի համաձայն բյուջետային միջոցների, ներառյալ՝ վարկերի և ներգրավված այլ փոխառու միջոցների ծախսման օրինականության ստուգումը իրականացնել իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով:	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան	
7. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի գ) կետի համաձայն	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝	

բյուջետային պարտավորությունների կատարման, հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման, հաշվապահական հաշվառման և հաշվետվության վիճակի գնահատումը իրականացնել իր անդամի (անդամների) և (կամ) առդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով:		Ա. Գևորգյան	
8. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի դ) կետի համաձայն բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանումը իրականացնել իր անդամի (անդամների) և (կամ) առդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով:	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան	
9. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի համաձայն. 1/ աճուրդային եղանակով օտարվող հողամասերում ընդերքօգտագործման թույլտվություն ստացած ընկերության հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր /հիմք/ ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի ը) ենթակետ: 2/ Աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինը համապատասխանեցնել ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին: 3/ Աճուրդով օտարվող հողամասի գործառնական նշանակությունը համապատասխանեցնել օտարման նպատակին/հիմք՝ ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «ՀՀ կառավարության որոշումը ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետ, 3-րդ ենթակետ: 4/ Համապատասխան հղում կատարել ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված կարգի 23.1-րդ կետին:	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան	1.Անի համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 8-ի թիվ 49 որոշմամբ Անիպեմզա բնակավայրում գտնվող 0,04 հեկտար հողամասի աճուրդի գործընթացը չի կայացել: 2. Անի համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 92 որոշման մեջ կատարվել է փոփոխություն հողի կադաստրային արժեքի վերաբերյալ և հաստատվել է Անի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 99 որոշմամբ: 3. Անի համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 12-ի թիվ 38 որոշման մեջ կատարվել է փոփոխություն և հաստատվել է Անի համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 17-ի թիվ 69 որոշմամբ: 4. Անի համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 23-ի թիվ 50 որոշման մեջ կատարվել է փոփոխություն և հաստատվել է Անի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի

			17-ի թիվ 57որոշմամբ: 5. Անի համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 12-ի թիվ 43 որոշմամբ Մարալիկ քաղաքում գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի աճուրդի գործընթացը չի կայացել:
10. <<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն համայնքի ավագանու թվով 1 անդամ ունի օրենքով թույլատրելիից ավել բացակայություններ համայնքի ավագանու նիստերից և քվեարկություններից:	Մինչև 2022 թվական հուլիսի 20-ը	Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան	2022 թվականի հուլիսի 15-ի Անի համայնքի ավագանու նիստում քննարկվել է հարցը
11. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ավագանու բոլոր նիստերի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով և ժամկետում ապահովել իրազեկում՝ նշելով նիստի անցկացման վայրը, ժամանակը, ինչպես նաև օրակարգի նախագիծը:	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Ք. Մկոյան	Ընդունել ի գիտություն
12. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն համայնքի ավագանու հրապարակային նիստերն օրենքով սահմանված կարգով հեռարձակել համայնքի պաշտոնական համացանցային կայքում:	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Ք. Մկոյան	
13. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի է) կետի համաձայն բյուջետային ուղերձում ներառել պետական բյուջեի նախագծում կամ պետական բյուջեի մասին օրենքում պետական բյուջեից համայնքի բյուջեին նախատեսված հատկացումների մասին տեղեկատվություն:	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան	
14. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի թ/ կետի համաձայն բյուջետային ուղերձում ներառել տեղեկություններ՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկների հաստիքների միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակի, աշխատավարձի ֆոնդի մասին և այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ, ինչպես նաև տեղեկություններ փաստացի աշխատողների (զբաղեցրած հաստիքների) միջին տարեկան ցուցակային թվաքանակի մասին:	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան	
15. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն ոգելից խմիչքների	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝	

կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվությունները տրամադրել ՀՀ օրենքով սահմանված կարգով:		Ա. Գևորգյան	
16. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն ՀՀ օրենքով սահմանված կարգով տրամադրել համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություններ:	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան	
17. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվությունները տրամադրել ՀՀ օրենքով սահմանված կարգով:	Մշտապես	Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ